

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՋԱՐՑԵՐ

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում սոցիալիստական ընդլայնված վերարտադրության բարձր ու կայուն տեմպերի ապահովման և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման համար առանձնապես կարեւոր նշանակություն ունի կուտակման արդյունավետության բարձրացումը*։ Հայտնի է, որ ազգային եկամտի կուտակվող մասը բաղկացած է արտադրական և ոչ արտադրական կուտակման, ինչպես նաև ռեզերվային ֆոնդից։ Ընդ որում, սոցիալիստական ընդլայնված վերարտադրության պրոցեսում դեբիշխող դեր է կատարում արտադրական կուտակման ֆոնդը։

Խոսելով արտադրական կուտակման հեռանկարների մասին, նախ և առաջ անհրաժեշտ է կանգ առնել հանրապետության կուտակման ֆոնդի կառուցվածքի հետազոտության վրա։ Արտադրական և ոչ արտադրական կուտակման ֆոնդերի մասին մոտավոր պատկերացում է տալիս կապիտալ ներդրումների հարաբերակցությունն ըստ արտադրական և ոչ արտադրական բնագավառների։ Հայկական ՍՍՀ-ում կապիտալ ներդրումների այն մասը, որը ներդրվում է արտադրության բնագավառում, ունի աճի տեմպերը։ Այսպես, ԼՅԵ 1965 թ. հանրապետության ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների ամբողջ ծավալում այն կազմում էր 63,2%, ապա 1975 թ.՝ 67,6%։ Միայն 1977 թ. հանրապետության ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի զարգացմանը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ, շինարարական ինդուստրիա) ուղղված էր ամբողջ կապիտալ ներդրումների 66%-ը, 1970 թ. 58%-ի դիմաց¹։ Այս փաստերը վկայում են հանրապետության արտադրական կուտակման ֆոնդի ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման նշանակության մասին։

Հանրապետության կուտակման ֆոնդի ավելի կոնկրետ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական ֆոնդերի հավելաճին ուղղված մասը իջել է։ Առանձնապես նվազել է կուտակման այն մասը, որն ուղղված է հիմնական արտադրական ֆոնդերի հավելաճին։ Դրան համապատասխան կուտակման ֆոնդում տեղի է ունեցել նյութական շրջանառու միջոցների հավելաճի և ռեզերվների տեսակարար կշռի բարձրացում։ Այդ փոփոխությունները բավականին զգալի էին 9-րդ հնգամյակում, որի ընթացքում հիմնական արտադրական ֆոնդերի հավելաճին ուղղված մասը կրճատվեց մոտ 2 անգամ, իսկ նյութական շրջանառու միջոցների և ռեզերվների բաժինը բարձրացավ

* Հոդվածը շարադրված է Հայկական ՍՍՀ նյութերի հիման վրա։

¹ «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», Ереван, 1978, էջ 139.

22%-ով²։ Արտադրական կուտակման ֆոնդի մեջ հիմնական արտադրական ֆոնդերի հավելաճի իջեցումը վկայում է նրանց օգտագործման արդյունավետության որոշ բարձրացման մասին։ Մյուս կողմից, նման իջեցումը բացատրվում է անավարտ արտադրության զգալի աճով, որն առաջացել է շինարարական օբյեկտների ոչ ժամանակին շահագործման և հանձնման հետևանքով։ Միայն 9-րդ հնգամյակի ընթացքում հանրապետության ժողովրդական տնտեսությունում շին ներդրվել 623 մլն. ու. հիմնական ֆոնդեր, որի հետևանքով ավելացել է նյութական շրջանառու միջոցների հավելաճի համար կատարվող կուտակումը։ Այսպես, անավարտ շինարարության և կապիտալ վերանորոգման նպատակով ծախսված միջոցները այդ ժամանակաշրջանում ավելացել են գրեթե 4 անգամ, իսկ նորմավորվող շրջանառու միջոցների աճի տեմպը կազմել է ընդամենը 101,4%³։ Նորմավորվող շրջանառու միջոցների աճը ամբողջ նյութական շրջանառու միջոցների հավելաճում 1970 թ. 68,1%-ից իջել է և 1975 թ. կազմել 45%⁴, իսկ անավարտ շինարարությանը և կապիտալ վերանորոգմանը ուղղված միջոցները ավելացել են 22,1%-ից մինչև 53%⁵, ինչով և պայմանավորված է նյութական շրջանառու միջոցների հավելաճի տեսակարար կշռի բարձրացումը Հայկական ՍՍՀ կուտակման ֆոնդի ամբողջ ծավալի մեջ⁶։ Հեռանկարում կարևոր նշանակություն ունի հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական շրջանառու միջոցների հավելաճերի միջև գոյացած անհամամասնության վերացումը։ Դրան կարելի է հասնել հիմնականում անավարտ շինարարության կրճատման միջոցով։

Այս բոլորի հետ մեկտեղ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների առցիալական կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 10—12 տարիների ընթացքում կապիտալ ներդրումների ամբողջ ծավալում պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների ու հիմնարկությունների բաժինը ոչ միայն գերակշռող է եղել, այլև ունեցել է բարձրացման տեմպեր։ 1965 թ.՝ այն կազմում էր 91,9%, 1975 թ.՝ 94,7%, իսկ 1977 թ. մնացել է անփոփոխ։ Վերջինս վկայում է կապիտալ ներդրումների օգտագործման հանրայնացման աստիճանի բարձրացման և կուտակման ֆոնդի միջոցների արդյունավետ օգտագործման մասին։ Ինչ վերաբերում է կուտակման և սպառման ֆոնդերի միջև եղած հարաբերակցությանը, ապա այն հանրապետությունում փոփոխվել է հօգուտ վերջինի։ Այսպես, օրինակ, եթե 1965 թ. սպառման ֆոնդը կազմել է ազգային եկամտի 67,1%-ը, իսկ կուտակմանը՝ 32,9%-ը, ապա 1975 թ.՝ համապատասխանաբար 69,9 և 30,1%-ը⁷։ Այդ տեմպերը կնկատվի նաև հաջորդ երկու հնգամյակների ընթացքում։

Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում, «սպառման ֆոնդի տեսակարար կշռի բարձրացումը հանրային արտադրության վերջնական արդյունքների աճի և նրա արդյունավետության բարձրացման ցուցանիշներից մեկն է»⁸։ Անհրաժեշտ է նշել, որ վերջին երկու հնգամյակներում սպառման ֆոնդի կառուցվածքն իր հերթին ենթարկվել է փոփոխության։ Նրա մեջ կայուն

² Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական տնտեսական տվյալներից։

³ Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական տնտեսական տվյալներից։

⁴ Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ կենտրոնական տնտեսական տվյալների հիման վրա։

⁵ «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 185։

տեմպերով բարձրացել է անձնական սպառման մասը: Սպառման ֆոնդի մեջ բարձրացել են նաև մյուս ստորերը, մասնավորապես, բնակչությանը սպասարկող և գիտական հիմնարկություններում կատարվող նյութական ծախսերը: Ընդ որում, վերջինն անմիջականորեն որոշվում է գիտատեխնիկական առաջադիմության աճող տեմպերով: Դրա համար էլ սպառման ֆոնդի տվյալ հոդվածի աճման տեմպերը կապահանվի նաև հեռանկարում, չնայած որ այժմ նրա տեսակարար կշիռը դեռևս բարձր չէ:

Հեռանկարում կուտակման արդյունավետության բարձրացման տեսանկյունից էական նշանակություն ունի նաև կուտակման աղբյուրների ուսումնասիրությունը: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի նախ և առաջ արդյունաբերական ձեռնարկությունների զուտ եկամուտը (շահույթը), որը վերջին հնգամյակում աճել է բավականին դանդաղ տեմպերով: Այսպես, 9-րդ հնգամյակի ընթացքում շահույթի մեծությունը հանրապետության արդյունաբերության մեջ աճել է միայն 7%-ով այն ժամանակ երբ 8-րդում՝ 54,7%-ով, իսկ 1975—1977 թթ.՝ 13,5%-ով⁶: Դա բացատրվում է նրանով, որ հանրապետության շատ ձեռնարկություններ չեն կատարում պլանային առաջադրանքները, որը և բացասաբար է ազդում կուտակումների ծավալի վրա: Հետևաբար, արտադրական կուտակման արդյունավետության բարձրացման նպատակով այս հանգամանքի վրա ևս պետք է հետազայում մեծ ուղադրություն դարձվի:

Կուտակման ֆոնդի միջոցների գոյացմանը մասնակցում է նաև բնակչությունը՝ հարկերի և պետական փոխառությունների միջոցով, որոնց բաժինը ՀՍՍՀ պետական բյուջեի եկամուտների մեջ հեռանկարում աննշան կլինի: Դա հաստատելու համար բավական է նշել, որ պետական փոխառությունների տեսակարար կշիռը հանրապետության պետական բյուջեի ամբողջ եկամուտների մեջ 1970 թ. 0,8%-ից իջել է 1975 թ. կազմել է 0,6%: Այն 1977 թ. որոշ չափով բարձրացել է և կազմել է 0,9%, բայց այնուամենայնիվ ունեցել է ընդհանուր տեսակարար կշիռ: Ինչ վերաբերվում է բնակչությունից զանձվող պետական հարկերի տեսակարար կշռին, ապա 1977 թ. այն կազմել է 6,4% 1970 թ. 9,4%-ի դիմաց⁷:

Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, որը նպատարում է աշխատանքի միջոցների ֆիզիկական և մասնավորապես բարոյական մաշվածքի արագացմանը, զգալիորեն մեծանում է այնպիսի կարևոր կուտակման աղբյուրի դերը, ինչպիսին է ամորտիզացիոն ֆոնդը և, մասնավորապես, նրա ռենովացիոն մասը: 1965—1977 թթ. հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ռենովացիոն ֆոնդը աճել է 3, իսկ արդյունաբերության մեջ՝ ավելի քան 2 անգամ և այդ իսկ պատճառով ամբողջ կապիտալ ներդրումների ծավալի մեջ ռենովացիոն ֆոնդի բաժինը 1970 թ. 8,2%-ից 1977 թ. հասավ 14%-ի, իսկ միայն արդյունաբերության կապիտալ ներդրումներում՝ 11,3%-ից մինչև 15,1%-ի⁸:

Ռենովացիոն ֆոնդը հատկապես կտրուկ մեծացավ 1975 թ. հետո՝ ամորտիզացիայի նոր նորմաների հաստատման հետևանքով, որը մեծացրեց

⁶ Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական վարչությունից:

⁷ «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 271:

⁸ Նույն տեղում, էջ 138, 269:

ոհնովացիոն ֆոնդը, միևնույն ժամանակ կրճատելով կապիտալ վերանորոգմանն ուղղված միջոցները: Ռենովացիայի համար ամորտիզացիոն նորմաների բարձրացումը պայմանավորված է հիմնական ֆոնդերի պտույտի արագացմամբ, նրանց փոխարինման ժամկետների կրճատումով, բարոյական մաշվածքի առավել լրիվ հաշվառմամբ, որոնք նպաստում են որպես կուտակման աղբյուրի ամորտիզացիոն հատկացումների դերի բարձրացմանը: Հեռանկարում ոհնովացիոն ֆոնդի դերը ավելի կբարձրանա, ինչը զգալի չափով կնպաստի սեփական հիմքով արտադրության ընդլայնմանը և հանրապետության արտադրական կուտակման նորմայի իջեցմանը:

Կուտակման ռեսուրսների օգտագործման գործում մեծ դեր ունի նաև (իսկ հեռանկարում ավելի մեծ չափով կունենա) արտադրության զարգացման ֆոնդը: 1970 թ. հանրապետության արդյունաբերության մեջ այս ֆոնդից օգտագործվել է ամբողջ միջոցների 70, 1975 թ.՝ 71, իսկ 1977 թ.՝ 84,3%-ը⁹: Ընդ որում, արտադրության ընդլայնման նպատակով դրա օգտագործումը տալիս է զգալի տնտեսական էֆեկտ, որովհետև այս ֆոնդի միջոցների հոգնման ժամկետը համեմատաբար մեծ չէ. այն շատ դեպքերում օգտագործվում է հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի կատարելագործման համար: Այս բոլորից բացի, կուտակման նպատակով արտադրության զարգացման ֆոնդի օգտագործման արդյունավետությունը ավելի կբարձրանա, եթե հաշվի առնվի, որ հեռանկարում, որպես տվյալ ֆոնդի ձևավորման աղբյուր, պետք է բարձրանա ամորտիզացիոն հատկացումների դերը: Հետևաբար, այս ամենն իր հերթին կնպաստի Հայկական ՍՍՀ ազգային եկամտի արտադրական կուտակման արդյունավետության բարձրացմանը:

Խոսելով հանրապետության արդյունաբերության մեջ արտադրական կուտակման ֆոնդի հեռանկարների մասին, անհրաժեշտ է կանգ առնել նաև արդյունաբերության «Ա» և «Բ» խմբերում դրա հարաբերակցության վրա, որը հանդիսանում է սոցիալիստական ընդլայնված վերարտադրության կարևոր համամասնություններից մեկը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1965—1977 թթ. հանրապետության արդյունաբերության «Ա» խումբը աճել է 68, իսկ «Բ» խումբը՝ 83%-ով, 9-րդ հնգամյակում համապատասխանաբար 44 և 46 %-ով, իսկ 1975—1977 թթ. ընթացքում՝ 17,4 և 15,8%-ով: Հայկական ՍՍՀ արդյունաբերության «Ա» և «Բ» խմբերի աճման տեմպերի այսպիսի հարաբերակցությունը հանգեցրել է դրանց տեսակարար կշիռների փոփոխությանը: Այսպես, եթե 1965 թ. արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի մեջ «Ա» խմբի բաժինը կազմել է 70%, «Բ» խմբինը՝ 30%, իսկ 1970 թ.՝ համապատասխանաբար 68 և 32%, ապա 1977 թ.՝ 66 և 34%¹⁰: Հեռանկար, դիտարկվող ժամանակաշրջանում նկատվել է արդյունաբերական արտադրանքի «Ա» խմբի բաժնի իջեցում և ընդհանրապես՝ «Բ» խմբի բաժնի բարձրացում: «Բ» խմբի աճի տեմպերը և դրա բաժնի փոփոխությունը զգալի չափով պայմանավորված են գյուղատնտեսական արտադրանքի այն մասի փոփոխությամբ, որը նախատեսված է «Բ» խմբի

⁹ Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ կենտրոնական տվյալների հիման վրա.

¹⁰ Народное хозяйство Армянской ССР в 1975 году. Ереван, 1976, էջ 47, 48; «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», էջ 49, 51:

նյութերում՝ թեթև և սննդի արդյունաբերության մեջ հետագա վերամշակման համար: Այսպես, 1965—1970 թթ. հանրապետության թեթև արդյունաբերության աճի տեմպերը կազմել են 175,5%, սննդինը՝ 155,6%, իսկ «Բ» խմբի արտադրանքի տեսակարար կշիռն այդ ընթացքում ավելացել է 2 կետով (պունկտով): 9-րդ հնգամյակում այդ թվերը աճել են ավելի փոքր չափով՝ թեթև արդյունաբերությունը՝ 32,9%-ով, սննդինը՝ 30,8%-ով, «Բ» խմբի արտադրանքը՝ 47%-ով, իսկ դրա տեսակարար կշիռը բարձրացել է միայն մեկ կետով¹¹: Քանի որ 11-րդ և 12-րդ հնգամյակների ընթացքում արագ տեմպերով պետք է աճեն թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը, ապա առաջընթաց աճի տեմպեր պետք է նկատվեն նաև «Բ» խմբում: Ավելին, հանրապետության արդյունաբերության «Բ» խմբի աճի բարձր տեմպերի վրա կազդի նաև արտադրական կուտակման ֆոնդի միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը, որը որոշակի չափով պայմանավորված կլինի վերը նշված հանգամանքներով:

Բացի այդ բոլորից, արտադրական կուտակման արդյունավետության հետ փոխկապվածության մեջ է գտնվում նաև նրա նորման: Սոցիալիստական հասարակությունը շահագրգռված է արտադրական կուտակման ֆոնդի (կապիտալ ներդրումների, հիմնական արտադրական ֆոնդերի, նյութական շրջանառու միջոցների) արդյունավետության բարձրացման հաշվին հասնելու դրա նորմայի կայունացմանը, իսկ այնուհետև՝ նույնիսկ իջեցմանը: Հայկական ՍՍՀ կուտակման նորման վերջին երկու հնգամյակների ընթացքում իջել է, բայց վերջին հաշվով մնացել է ավելի բարձր, քան ամբողջ Միությունում է: Ինչ վերաբերում է հանրապետության արտադրական կուտակման նորմային, ապա այն նույնպես եղել է ավելի բարձր, քան ամբողջ երկրում, բայց, այնուամենայնիվ, նկատվել է նրա իջեցման տեղեկանք: Այսպես, 1965 թ. 27,1%-ից և 1970 թ. 26,4%-ից այն 1975 թ. իջել է մինչև 22,8%-ի: Իսկ ոչ արտադրական կուտակման նորման այդ նույն ժամանակաշրջանում բարձրացել է: Եթե 1965 թ. այն կազմել է 5,8%, իսկ 1970 թ.՝ 6,7%, ապա 1975 թ.՝ 7,3%¹², որը բացատրվում է հանրապետության ոչ արտադրական ոլորտի հետագա զարգացմամբ: Հետևաբար, ամբողջ հետադուրս ժամանակաշրջանում Հայկական ՍՍՀ-ում տեղի է ունեցել արտադրական կուտակման նորմայի իջեցում: Դրա հետ մեկտեղ հաշվաբեկները ցույց են տալիս, որ հանրապետության արտադրական կուտակման ֆոնդն օգտագործվել է ոչ բավարար արդյունավետությամբ: Այդ էն վկայում այնպիսի ամփոփ ցուցանիշները, ինչպիսիք են արտադրական կուտակման նորմայի հատույցի և արտադրական կուտակման արդյունավետության գործակիցները: Առաջինի բարձրացումը խոսում է արտադրական կուտակման ֆոնդի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին, որովհետև այս դեպքում արտադրական կուտակման նորմայի մեկ տոկոսին բաժին է ընկնում ազգային եկամտի հավելաճի ավելի մեծ տոկոս, իսկ երկրորդի փոքրացումը վկայում է արտադրական կուտակման արդյու-

¹¹ Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրինականից:

¹² Հաշվարկված է «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», Ереван, 1971, էջ 21; «Народное хозяйство Армянской ССР в 1975 году», էջ 24 վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

նավետության իջեցման մասին, քանի որ այս դեպքում ազդային եկամտի հավելաճի մեծ տոկոսին ընկնում է արտադրական կուտակման նորմայի մեծ տոկոսը:

Նշված ցուցանիշների հետազոտությունը ցույց է ապիս, որ 8-րդ և 9-րդ հնգամյակների ընթացքում հանրապետության արտադրական կուտակման նորմայի իջեցման հետ մեկտեղ տեղի էր ունենում դրա հատույցի դորժակցի փոքրացում և դրան համապատասխան արտադրական կուտակման արդյունավետության գործակցի բարձրացում, այսինքն՝ ՀՍՍՀ-ում այդ ժամանակաշրջանում տեղի էր ունեցել արտադրական կուտակման ֆոնդի միջոցների օդտագործման արդյունավետության իջեցում: Հանրապետությունում արտադրական կուտակման նորմայի հատույցի դորժակիցը 1965 թ. 0,45-ից և 1970 թ. 0,47-ից իջել է և 1975 թ. կազմել՝ 0,41: Եթե 1965 թ. ազդային եկամտի մեկ առկու հավելաճի ստացման համար անհրաժեշտ էր կուտակել եկամտի 2,2%-ը, իսկ 1970 թ.՝ 2,3%-ը, ապա 1975 թ.՝ 2,5%-ը¹³:

Հետանկարում, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, հանրապետությունում արտադրական կուտակման ֆոնդի արդյունավետության բարձրացման հաշվին որոշ չափով հնարավոր կլինի իջեցնել նրա նորման, որը և վերջին հաշվով կվկայի Հայկական ՍՍՀ ռեզիդենտի արտադրության արդյունավետության աճման մասին:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВЕННОГО НАКОПЛЕНИЯ

ТОРОС ТОРОСЯН

Резюме

Высокие темпы социалистического воспроизводства и эффективность общественного производства предопределяются ростом эффективности использования производственно накапливаемой части национального дохода. В современных условиях она зависит прежде всего от совершенствования структуры фонда накопления и от источников накопления. Эффективность производственного накопления находится в непосредственной взаимосвязи и с соотношением групп «А» и «Б» промышленности. Более того, вследствие повышения эффективности производственного накопления в промышленности Армянской ССР в перспективе можно будет снизить норму производственного накопления.

¹³ Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ կենտրոնական տվյալների հիման վրա: